58. ՍԸԹԻՆ ՈՒ ՖԱՐԽԻԿ

Կէղի, չէղի էրկու ախպեր կէղի։ Էրկու ախպոր ավլագ թավ-լաղ չէղի։ Գելին կէրթան չոլ սայրան։ Էրկու խնձոր աստծուց կէղի ճրու խետ գիգան. էրկու ախպեր կվերցուն, ամեն մեկ խընձոր կվերցուն տանին ուրանց, կեսին. «Ախր աստծուց էկե մըզիկ». կտանին կուտին։

Խնձորի մե կես կնիկ կուտա, կեսն լէ իրիկ կուտա, էն մեկ-լէ՝ հմալ։

Ըդրանց կնկտիք կմնան էրկու խուքով։ Ին ամիս, ին սհաթ օր կթմմի, էրկուա խըդրաց կպառկին։ Մեկ կբերա տղե մի, մեկ-լէ կբերա ախչիկ մի։

Ֆարխկա պապ կմեռնի։ Գելնին հ՚ըմեն կէրթան ախչկան մոր բարձին, չէրթան Ֆարխկա մոր բարձին, կէրթան ըն ախչկա բարձին։

Իդ հախս կիգան թը՝ էդ տղի մամ ուրկի (խռովի), թը չէկան-ուր բարձին։ Գելին կէրթան ըդրա բարձին, կեսին. «Խեղճ ի, էր-թանք»։ Կէրթան օրթը ծեռ թալա քանդա զկոնդախ, կբանան զկոնդախ իրարուց, կոնդրխի միջու տղեն կթռի կնստի բըխու-րիկ, էրկու իրեք խանա խաղ կեսա, դառնա կեսա.

— Հարգե կխարցուս, իմ անուն Ֆարխիկ ա, իմ նշանլու անուն լէ Սըթի ա։ — Հ՚ինք ըխո ուր անուն կդնա։

Կէրթան ընդրա խորոխպոր կեսին. «Քու ախպոր լամուկ-

մ՚էղի, հրմլա կեսա՝ «Ես ու Սրթին մեկ խնձորեն ինք, իմ անուն Ֆարխիկ ա, իմ դոմամի անուն Սրթի ա»։

Խորոխպեր կեսա.— Բերեք սպանեք։

Գեղացիկ կեսին.— Խեղճ ա, քու ախպոր մեկ տղա կա, մ՚սպանե։ Տար դիր ընդրա պապու ծիու հ՚առեճ, էն օր պապ մեռի, իսան զէդ չտեսի, ոն օր էրթա ընդրա հ՚առեճ, կզարկա կըսպանա. տար կոնդախ դիր ծիու հ՚առեճ, զարկա ուր օտներուն մեջ, կէնա լոշ (կճզմե)։

Կտանին, կդնին ծիու հ՚առեճ։ Կվերցու ծին ուր դլոխ կաչկա օր կարմիր կոնդախ մե ուր հ՚առեճ դրուկ ա։ Կվերցու կխածա օր զարկա դետին, էնա լոշ, սպանա։ Իդա հախս ըդ Ֆարխիկ կոնդխի միջեն խաղ մի կեսա.

Կեսա.— Հարե բոզե, բոզ հեղինե.
Դյու մըն մադա բար պալինե
Ֆարխըկ մաղին բա դու բրդա
Բրոբշմա չեու ուղիվի։

Կեսա.— Է՚յ, բոզ ձի, ինձի մի զարկի քու օտներու մեջ ես օր ճոչցա, ես քըզիկ կէնիմ օսկի արծաթ ոբշմով։

Իդհախս ծին չզարկա էլ դետին, կվերցու դնա ուր մսուր ու կլիզա ըդրա կոնդախ։

Կէրթան կտեսնին օր դրեր ա ուր մսուր, կլիզա, չըսպաներ ա։

Կբանան, կաչքին զէդ կոնդախ, կաչքին օր թը ախչիկ տղեն փաթված իրար մեկ կոնդխի մեջ ու քրտնած, ծիու հ՚առճև։

Խրլխ կեսին.— Աստծուց ա, մի սպանի, խեղճ ա, քու ախպոր տղեն ա։

Պապ կեսա.— Չէ՚, խստու իմ ախչիկ տարած եք դրեր եք տղու մոտ։ — Կեսա.— Օրթր կեսիք աստծուց ա, տարեք դրեք յոթ դարդբխով ներսով ներս, երթիք կալուցեք, դռներ փակեցեք, բերեք բալնիք տվեք իմ մոտ։ Բերեք էրկու պառթ թավ (տերև) դրեք դուռ, կրակ թորկիք ինե, ես չայ խմիմ իմ խոշումներով հարի լուս, օր տեսնիմ ախչիկ տղու մոտ էղնի. օր տեսա մոտ էղավ, կեսիմ աստծուց ա, իմ ախչիկ կիտամ տղին։

Գելին սաբախտան, կիչքին օր թը ըտ էրկուս մե կոնդխի մեջն ին, փաթթած իրարու, քրտնած։

Ըդրա խորոխպեր կեսա.— Տարեք ախչիկ, տվեք մամ, տղեն լէ տվեք մամ, ամեկ ուր մամ, թրխ օշնան. էն օր կիտամ խլղին, կիտամ իմ ախպոր լամկուն։

Ֆարրխկա խորրխպոր էրկու կյաճկա լէ (աղջիկ) կէղի, միջ-նեկ ախչկա անուն Զինե, պզտիկ ախչկա անուն՝ Նազե, ճոչ ախչկան լէ՝ Սրթե։

Իրեք ախչիկ լէ ճոչցան, գացին բաղի մեջ սեյր էնեցին։ Ըդ ախպոր լամուկ իրեք քուր լէ կպաքա, քուրվըտոց սիրտ կէրկումտի, կըսին. «Հ՞որի՞ մըզի իրեք խըտրաց կպաքա»։

Օլոր օր գիգան բաղի մեջ, կեսին թը. «Ֆարխիկ, ամեկուս պըտի խաղ մի ըսիս»։

Ֆարխիկ իմաստուն կէղի, կեսա թը՝ Նազն՝

Դու բընազի, դու քյահելակ
Գյարդան կ։սզի,
Խոզի բըվի ավտի
Դաշխո ժըխոոա տը խոյ դի։

Նազե, դու աղեկ նազ իս, քու վիզ մընիս քյահըլ ծիու գարդան, երանիկ ընդրան վըր քըզիկ կուզա։

Նազեն կէրկումտի, կեսա.— Վոլլա ծռերի վըր ընձիկ։

Զինեն կեսա.— Խաղմ լէ ընձի կանչա.

Կեսա.— Հարե Զինե
Դու բըզինե
Դու բը քյահըլակ
Նյա ֆըր զինե
Խոզե բըվի ավդի
Դ։ա շխո ոը դը բինի։

Կեսա. Զինե, դու աղեկ զինիս, ախչիկ իս, կը մընիս աղեկ ծիու պես իս, էրանեկ էն ավդին, իսնին օր քըզիկ կուզե։

Ֆարխըկ կեսա.— Զխո Սրթին
Սրար թաջե հըմիուն ա
Դրալալ ա. դրլըմըն ա։

Կեսա.— Սրթին շխո հ՞ըմընու աղեկն ա, իմ սրտի ազիզն ա։

Զինեն ու Նազեն կեսին.— Մեր ծամեր փեստեցինք, էնիկ ծռեր ա վըր Սրթուն,— կեսին,— մեր խորրխպոր լամուկն ա, մեր ճոչ քուրն ա, էն օր էղի խըլղին, թըխ էղնի մեր խորրխպոր լամկուն։

29—1086

Գելնին խըտ իրար կէրթան տուն։ Կէրթան տուն, օլոր օր գիգան բախչեն սեյրան էնելու։ Իրիկուն կէրթան տուն, տեսին ըդ Ֆարըխկա քեռին վըր տանքին նստուկ ա։

Սըթին զինք գիտա էդ, կեսա.— Ֆարխիկ չի դամ խըտ քի, ամոթ ա։

Կեսա.— Հ՛որի՞ չիգաս, քու քեռին ա, վըր տանքին ա.— Կեսա.— Չէ, պըտի էրթանք խըտ իրար։ Կեսա.— Խազմ լէ պտի էսիմ իմ քեռուն, կէրթա թըխ էրթա, չէրթա, մեք խըդ իրար կէրթանք։

Կեսա.— Հըրե ուսըվո
Ուսըվե խանի,
Դես չը դըքի
Սարվի բանի,
Դես բրհավալե
Սըթի Ֆարխիկե նզանի։

Կեսա.— Ուսուֆե խան, դու ի՞նչ կէնիս էդ տանիքի վրեն, դու չգինա՞ս Ֆարըխկա մաշուղըթեն ու Սըթուն։

Քեռին դելի թևանի աբեն կթոթվա, կթալա վըր ուր թևերուն ու կէրթա։

Ուսուֆ օր կէրթա, ընդրանք թև կթալին թևին, կէրթան։

Օլոր օր կէրթան բախչեն սեյրան, կտեսին բարժարցի լամուկ մև գիգա, անուն Զախկի, գիգա գընցի ընտեխ, կեսա. «Էդ ի՞նչ անտեր կյաճկեք ին, իգա կյաճկեք օր զիրեք լէ կպաքա էդա լամուկ»։ Զախկեն հ՛ոցքի ճամխու խետ կէրթա։ Լցքվորի մի ռաստ գիգա, կեսա էդ լցքվորին.

— Էդ ի՞նչ անտեր կյաճկեքմ ին, իդա կյաճկեք օր զիրեք լէ լամուկ կպաքա։

Լցքվոր կեսա.— Ք... կեր, իդոնք մեկ խնձորեն ին, ճոչ քուր ու էն տղեն մե խնձորեն ին, էն էրկու քուր լէ ընդրա խորոխպոր ախչկներն ին։

Զախկեն կեսա. «Ես պտի դառնամ էրթամ ըդրանց էզութեն իմնամ»։ Կէրթա կնստի բաղի պատին, թամաշա կէնա հար իրկուն, իրկուն օր թը ինդոնք դիդան գընցին, ըդ լամկու աչք օր կքիսի Սըթին, խելք կէրթա։ Զինեն ու Նազեն կէրթան լամկու աչքեր կրոնին ու գիլան վըր լամկուն։

Իդ հախս Սրթին կեսա.— Դու քիսաք օր թը ըդ լամուկ պատվավ։

Քուրվըդիկ կեսին.— Չէ՛։

Կեսա.— Օր չքիսեր եք, քելեք էրթանք, ուր քեֆն է։

Քուրվըդիք ու Ֆարխիկ կէրթան տուն։

Ըդ Զախկեն գիմնա, կաչկա օր թը աստղեր հ՝ելած ա, կեսա. «Ըդի էրա՞զ էր տեսա». չի ելնի, կփոշմնի, կնստի էդտեխ, անոթի ու ակռեք մազ կտանի։ Իդհախսուն կես գիշեր ա, դռներ փակին։ Կէրթա դուռ մի օր բաց ա. էրկու խուրձ թաֆ կա ըդտեխ, իդհախս թաֆեր կքաշա ուր հ՝առեճ ու նստի, հ՝օդի խըլղեր էլած գացած ին։ Ինք օր նստուկ էր Սրթու պապու դիվնու դուռն էր, բաց էր։ Սրթու պապ ուր կահվաչուն ըսեց թը, փետ բեր, կահվե մի էփինք խմինք։ Կահվաչին կէրթա, ծեռ կթալա փետ կքաշա, Զախկեն զխուրձն փետ բռներ ա, չթորկեր օր տանա։ Կահվաչին կեսա.

— Դյու քի ի (դու վո՞ն ես)։

Կեսա.— Ես իմ։

Էրկու հաղ կեսա. «Դու վո՞ն իս». էն լէ կեսա. «Ես իմ»։

Կահվաչին կէրթա տուն, կեսա.— Մարդ մի հ՝ոդա նստուկ ի փետ դալտեն, չթորկա օր թը ես փետ բերիմ։

Աղեն կեսա.— Գնա կանչա, թըխ գա, անոթի ա, թըխ հ՝իգա խաց ուտա։

Գիգա կնստի, կուրըխնա, թը ընձի կանչեցին խացի վրեն։ Հ՝ոդա էրկու օր կմնա։ Կաչկա օր թը էդի Սրթու պապու տունն ա։ Էլ չէրթա հ՝ոցքի, ծեռ չբռնա օր թը էրթա։ Կմնա, հ՝ոդի, կէլնի Սրթու պապուն խովիվ։

Սրթու պապ Զախկին կեսա.— Կեղի՞ս ընձի խովիվ։

Կեսա.— Խա.— կուրըխնա, թը էղա իդոա տան խովիվ։

Պապն կեսա.— Ըսօր տարվան գլոխ չէ՞, օչխար կիտամ քի, էլ չաչկիմ, չտեսիմ հարի տարին թըմմի. օր թըմմավ, գիգամ կտեսիմ օր գառն ու մաքին իրարուց ճոկվավ, քու վիզ կղարկիմ։ Օր չճոկվավ, քու լեզուն ինչ զվռնա, կիտամ։

Ըդ Զախկեն կուրըխնա, կէրթա օչխար կարծա, կեսա. «Սրթին խասավ ընձիկ». էլ նա կիշեր կաչկա, նա ցերեկ կաչկա, նա զիան կաչկա, նա չայիր կաչկա, հ՝մեն կիտա գետին, կկերցու։ Էլ գառն ու մաքին իրարուց չճոկվի։ Իդախս դառներ ու օչխըրներ կլավնան շատ կլավնան, դառներ խընց մամ շատ կբետնան։ Հը-

մալ կկլավնան, ընդոնց դմակներ կպատռին հ՝իրարուց։ Գիգա օրթը տարին թըմմի։

Սրթու պապ կեսա.— Նազե, դնա Զախկեին ըսա, թըխ օշխար բերա ճրու հ՝առեճ, ական գլոխ օր աղ իտա օշխրին, ճուր իտա օշխրին, օշխար նստցու ընտեխ, հարի ես իգամ։

Նազեն գնաց ական գլոխ, Զախկեին ըսեց.— Իմ պապ կեսա թըխ բերա օդա օշխար, աղ իտա ու՝ ճուր իտա ու նստցու օդի, հարի ես հ՝իգամ»։

Նազեն դելի հ՝ոցքի դիգա տուն։ Սրթու պապ կէրթա օրթը օշխար տեսնա։ Կաշկա օր գառ քրնց օշխար, քրնց մամ բետ ա, կլավնա, ուրանց դրմկներ ծեվեր ա կլավութենից։ Իդհախս կեսա.

— Զախկե, հ՝իրկուն արի տուն, դու ուղա, իտամ քրզի։

Հ՝իրկուն ա ճրաք կպուն, Սրթու պապու դիվան լիք կլցվին։

Զախկեն կէրթա օդի։ Զէ՞, Ուսֆե խան Ֆարխկան քեռին ա, էդ լէ նստուկ օդի, դիվնի մեջ։

Սրթու պապ դիվնի մեջ կեսա.— Դե, Զախկե, ուղա՝ իտամ,— Կեսա.— ալավաքիլ, դու ուզա՝ ես իտամ. Զախկե, առ քրզի կոտ մի օսկի։

Կեսա.— Զէ՛, ես չառիմ։

Կեսա.— Առ քրզի էրկու կոտ օսկի։

Կեսա.— Զէ՛, չառիմ, էրկու կոտ օսկի լէ չառիմ։

Կեսա.— Իրեք կոտ օսկի կիտամ։

Զախկեն չառի։

Կեսա.— Առ քրզի չորս կոտ օսկի։

Զախկեն կեսա.— Չառիմ։

— Առ քրզի խինդ կոտ օսկի։

Զախկեն չառնի։

Հդտեխ Սրթու պապ կկանի, կեսա.— Զախկե, արի իմ ծեռ համբուրա օր Նազեն իտամ քրզիկ։

Էն լէ կեսա.— Զէ՛, չառիմ, ընձի չպիտի։

Սրթու պապ կեսա.— Արի իմ ծեռ, Զինե իտամ քրզի։

Զախկեն կեսա.— Զէ, չառնիմ։ Ուր աչք Սրթին ա։ Զախկեն կեսա.— Քու պապու խերի խամար Սրթին տուր ընձիկ։

Ուսֆե խան կլցվի, կեսա.— Դու իմ խարզի նշանլու բախս իմ հ՝առեճ կիտա՞ս։ Դելի ճլոտ մի չի, թուի մի կզարկա իդրա էրես։

Իդհախս Սրթու պապ կորկի, կեսա.— Դու իմ խովվու զարկեցիր։ — Ինատ կէնա Ուսֆե խանին, կեսա.— Զախկե, արի իմ ծեռ, Սրթին իտամ քրզի։

Զախկեն կէրթա ծեռ կխամրուրա, կառնի Սրթին ուրին, կուրրխնա։ Կառի զուր փետ ուր ծեռ, ու կէրթա օչխրի հ՚առեճ։

Սրթու պապ կեսա Նազեին.— Էրթաս Զախկեին ըսիս, աղեկ հոկիճ մորթա, քրթա, փրթա, լվա ու հ՚ըլնա իշու բեռան մեջ, բերա օդա, խրրիսա դնինք, հ՚իրկուն ուր մար ու Սրթին կտրինք։

Նազեն կէրթա կեսա Զախկեին.— Էրկու աղեկ հոկիճ մորթա, քրթա, փրթա, լվա հ՚ըլնա իշու բեռ ու բերա էնինք խրրիսա ուր մար ու Սրթուն հ՚իրիկուն կտրինք։

Իդհախս Նազեն դիդա տուն։ Զախկեն լէ էրկու աղեկ հոկիճ կմորթա, կքրթա, կփրթա, կվլա կհ՚ըլնա իշու բեռ ու գիգա ճամբախ։ Խաղ կկղանչե ու գիգա։

Ուսֆե խան Ֆարրխկա քեռին ա, գելա էրկու աղեկ մարդ ուր խոլմներ կճամփա Զախկե հ՚առեճ, կեսա.

— ՀՀզախկեն մորթիք, քրթիք, փրթիք հ՚ըլնաք իշու բեռ, հ՚իգա վրր Սրթու պապուն։

Խոլմներ կէրթան հ՚առեճ, կկանին չոլ, Զախկեն էկավ, Զախկեն խաղ կեսա ու գիգա։

Խոլմներ կեսին.— Է՚ս Զախկե, աստված խերն էնա, ըդ ի՞նչ էղեր ա։

Կեսա.— Մեր հ՚ո...ն կյա՞ր գիգա, օր դու ըսիք Զախկու խարսնիք ու Սրթուն ա։

Կրոնին Զախկի ծեռ ու կթրտին, կփրթին, հարք կագար ծեռ մի սաղ կթողին։ Զէն օչխրի միս բեռնեն կդարտկին, զՀՀզախկու շանդակ գհ՚ըլնան մեջ, ծեռ կդնին վրր բեռան էրեսին, օսկի մի կիտան տղու մի ծեռ, կեսին.— Իսա էշ քշի տար Սրթու պապու դուռ ու դարձիր։

Տղեն ա կքշա, կտանա Սրթու պապու դուռ գողտու, կթորկա օդի ու կդառնա։ Սրթու պապ կտեսնա էշ դուռ կանուկ ա։

Կեսա. —Նազե, Նազե, էշ էկի, Զախկեն չէկի, հ՚ելի իշու բեռ դարտկա, հարի Զախկեն հ՚իգա։

Նազեն գելի օրթը իշու բեռ դարտկա, կաչքա օրթը Զախկի ծեռ վրր հ՚իրիսին ա, կեսա.

— Վա՜յ, ապո, էսա Զախկի ծեռն ա ու Զախկի շանդակն ա։

Սրթու պապ լէ կեսա թը.— Ըդ Ուսֆե խան հրմալ էրեր ա,

սպանել ա տվե.— Կճամխե, կեսա.— Գացեք զՖարխիկ բերեք սպանեք, տեխն էլնի։

Հ'իրկուն ա, կճամխին Ֆարխկու ետև, օր բերին, սպանին։

Սըթին գելի իրեք ուլինք կկախա ցուկեն (կտուրեն)՝ մեկ սև, մեկ սիվտակ, մեկ լէ կարմիր, կեսա.— «Ֆարխիկ էկավ օր ըդ իրեք ուլինք տեսավ, ֆահմավ, չխո կֆահմի, կդառնա, չսպանվի, չէ օր չդարձավ չֆահմավ, էն լէ Զախկեի պես կսպանվի»։

Կէրթան կառնին զՖարխիկ գիգան դիվնի դուռ, կեսին.

— Ֆարխիկ, արի քու խորըխպեր քղիկ կղանչե։

Կբերին դիվնի դուռ։ Գիգան, ոտ մի կմնա զանգուն, մեկ լէ կմնա գետին։ Է՞, չէ՞ Ֆարխիկ իմաստուն ա, աչք կքիսի ըդ ուլունքներ, գելի զծին մեկ լէ կխեծնի։

Ըդ մարդիկ կեսին.— Դու հ'որի՞ խեծար։

Կեսա.— Իշկեք իդա ցուվի ուլունքներ,— կեսա,— էդի իմ Սըթին ա կախե օգի, իմ հ'ապով ա կախեր ա, օրթը՝ իդա կարմիր իմ արուն ա, սիվտակ ուլինք իմ պատանքն ա, ըն սև ուլինք իմ Սըթին վըր ընձի սև կկապա։

Գելի հ'ոցքի կթորկա կէրթա։

Ֆարխիկ, Ուսֆի խան ու Սըթու պապ կէղին իրար խետ դյուշման։ Ֆարխիկ էլ չկերնա էրթա Սըթուն տեսնա, կեսա.

— Ուսուֆ, ես պտի մեռնիմ, չաթլամիշ էլնիմ օրթը ես Սըթին չտեսնիմ։

Քեռին կեսա.— Հ'ելի գնա մեր տուն։ Քենիմ ժամանակ մացի մեր տուն, սանք իմա՞լ կէղի։

Էգ լէ գելի կէրթա ուր քեռու տուն։ Քեռու տուն շատ հեռուն ա, վոն էրթա ըդ գեղուց վըր քեռու տուն, դյուշմանին կէնին փրթուշ-փրթուշ։

Ըդ Ֆարխիկ կէրթա, շատ ու քիչ աստված դինա, ծուն շատ գիգա, փուք շատ կէնա, կփքնա գիտա ծիու գոշ, ծին բեխամ կէղի (կհոգնի), կկանի։ Ֆարխիկ կեսա «Վա՜խ վա՜խ, խեխթանք ես լէ, իմ ծին լէ ու գացինք»։ Կեսա.— Կանի քենի մը խանա խաղ էսիմ ըդ ծան, խալավ՝ չխո կխալի, թե չխալավ, ես լէ իմ ծին լէ կխեխթինք։

Գելի էն դեխ խաղ կխանչա, կեսա.—

Հրե խոդավ
Դյու բդի սայի
Դյու ռեկի վակի

Ճլու ճիա ի
Ֆարխիկ հավռա մալե խալե խո,
Խերու շայի[1]։

Ծուն լէ գելի զրուցք, կեսա.—

Հարե Ֆարխիկի
Աշե բըհալըմ
Բըքավըմ ղկուլե զնարոն
Աղե դըրըմ դարմանէ նախոշըմ[2]։

Ֆարխիկ լէ կեսա թը.—

— Դարման է նախոշա դոդապի
Ավ նախոշ շհալի խոսա նարի[3]։

Իդհախս հարի իդա խոսք կեսա, կթըմմի, ծուն կխալի, կաշ-քա օր թը թիղ մի կանանչ էլավ գետին, արև էլավ։

Ֆարխիկ կիչի ծիուց, փառք կիտա աստծուն, էրես կքսա գե-տին, կեսա. «Փառք ու պատիվ իմ աստծուն, դու օր զիս ու իմ ծին աղատեցիր»։ Իդհախս կուրըխնա ու գելի կէրթա ուր քեռու տուն։

Կէրթա գեղին կմոտենա Ֆարխկա քեռու դուռ լիքն ին. չէ օր աղա ա, կտեսնին ծիավոր մի գիգա էնտեխեն, նա էգ ծիու պես ծի կա, նա էդ մարդու պես մարդ կա, նա ընդրա սիլըհներու պես սի-

---

1 Ո՞վ աստված,
Դու երկինքը պարզկա դարձրու
Այս լեռ ու կածանում,
Որ Ֆարխիկը հասնի իր քեռու տուն
Բարով ու ապահով։

2 Հա, Ֆարխիկո,
Ես կհալչեմ,
Կլցվեմ ժայռերի ճեղքերը
Եվ կդառնամ հիվանդի դեղ։

3 Թեկուզ դառնաս հիվանդի դեղ
Եվ վերչանաս,
Երիտասարդի համար, թեկուզ ոչ քաղցր,
շուր կմնաս։ (Ս. Կ.)։

լահ կա։ Գելին, Ֆարխկա քեռին կեսա.— Որ օր էկավ սպանինք,— չէ օր դյուշման ին, կեսա թը։ — Ընձի խարզե մի կա ըդտեխ, թը օր իմ խարզեն էղավ, չսպանինք։

Խոլմներ կեսին.— Էղավ օր աղեկ մարդ էղավ քու ծեռ չպոնա օրթը սպանինք, ըսես թը իմ խարզեն ա։

Կեսա.— Չէ, գու մը զրուցեք, էնիկ գիգա ծըզի բարև կիտա, դու ընդրա բարևն առեք։

Ֆարխիկ կքշա գիգա քեռու դուռ դիշի, բարև կիտա, բարև չառնին։ Ֆարխիկ բխո ուր բարև ինք կառի։

Կեսա.— Գյալո՛, տեխ մի չկա՞ իմ ծին քաշիմ։

Մեկ ծեն էնա։ Ինք բխո կեսա. «Աստված շեն պախա Միրու խան, պտի ես իմ ծին քաշիմ ներս»։

Ծին կտանա կկապա ու գիգա, կկանի քեռու հ'առեճ, կեսա.

— Գյալո՛, ես հեռու ճամփեն իմ էկի, բան մի չկա՞ հ'ըլնամ իմ ծիու հ'առեճ ուտա, անոթի ա։

Մեկ ծեն չէնա, չէ օր թամբեխ էրեր ա, օր մեկ չղրուցա. ինք բխո կեսա. «Աստված շեն պախա Միրու մարաք, էրթամ հ'երթ, առվուտ բերիմ հ'ըլնամ իմ ծիու հ'առեճ, ուտա»։

Կէրթա կառնի զառվուտ ու կդառնա, կբերա գըլնա ծիու հ'առեճ, կուտա։ Գիգա կկանի քեռու հ'առեճ, կեսա.

— Ես հեռու ճամբեն իմ էկի, Գյալո, փըշը մի խաց չկա՞ տաք ընձիկ, ես անոթի եմ։

Մեկ ծեն չէնա։ Գելի ինք բխո կեսա. «Աստված շեն պախա Միրու մառան, էրթամ առիմ մածուն ու խաց հ'իգամ ընձի, ուտիմ»։

Կէրթա Միրու մառնեն կառնի մածուն ու խաց, գիգա կնստի ու կուտա։ Էլ ծեն չէնա, կնստի դիվան հարրիկուն։ Ընդրա քեռու տուն կեփին խրիսա, կհ'ըլնան քասեք։ Գուշ կշարդին, գուշու կթուն կհ'ըլնան վըր խարիսեքներուն, խուի կդնին վրեն, շլով կփաթթին, բերին կդնին Ֆարխկա հ'առեճ, անծեն անծուն, կեսին. «Թը խանեց, մեր խարզեն ա, թե չխանեց, կսպանինք չխո»։

Իդհախս էդի կեսա.— Դիվանե խալիմ բիսթու շաղա
Խենիշ խալեմին հըմու նավեմեր է
Քարե ռաղ ու
Նա բեժին ավե հարիսայա
Սարդակու կակըշ գըմուշա։

Կեսա.— Իմ քեռու հ՝օդեն քսան ու վեց մարդ ա, խեռնիմ քեռու մոտեն հ՝մեն սև էդին, չէսին, էդի խրիսա ա, վրեն լցուկ դուշի կթուն ա։

Իդհախս մոլեն կզրուցա, մասալ մի կեսա.

Կեսա.— Քու անունդ ի՞նչ ա։

Կեսա.— Ֆարխիկ։

Կեսա.— Ֆարխիկ, էն ի՞նչ ա՝ պապ սև, տղեն սիվտակ։

Ֆարխիկ կեսա.— Մոլլա, դու ընձի խեվաս, քու մուրուք քու քիթ ու բեխ խոթես շան վ..., չասիս էտիկ բամբակն ա ու կերճեպ սև։

Էլ օր կգինան թը ուրանց խորղեն ա, ծեն չխանին։ Գելին կըթափին վըր իրարու սկըքնին։ Ֆարխկան ճար (տեղ) չիտան։

Ֆարխիկ կեսա.— Տեխ մի տվեք ես լէ քնիմ, հեռու ճամփեն իմ էկի, նեղացուկ իմ։

Մեկ ծեն չի տա։

Կեսա.— Սախ մնա իմ քեռու էրկու տղեն. էնտեխ հ՝ինք կեսա.— Իմ քեռին, մեկ Հասան, մեկ Հյուսեն, գելիմ էն էրկուսի մեջ կքնիմ։

Քեռին իդհախս դելի կուրըխնա խարղի վրեն, կգնա վըր շոքին ու կպաքա։

Իդհախս դիվնի մարդիկ գելնին կնստին, քեռին կեսա.

— Գեղացիք, դու գինե՞ք իմ էրկու լամկու անուն Հասան ու Հյուսեն էր։

Կեսին.— Չէ՛։

Կեսա.— Տեսա՞ք օրթը ես կըսենք էդա իմ խարղեն ա։

Իդհախս կքնին ու սաբախտան գելնին։

Կմնա փել մի ժուք ու ժամանակ մի, Ֆարխիկ կեսա.— Ես պտի էրթամ նեճիր սեյրան։

Քեռին կեսա թը.— Ֆարխիկ ջան, առ քըզիկ աղեկ մաքի, մորթա կի, մ՝էրթա նեճիր։

Էնիկ կեսա.— Չէ՛, ես կէրթամ նեճիր։

Քեռին կեսա.— Իդա ճամբով գնա, էն մեկել ճամփով մ՝էրթա, վոն օր գացե, չէկե։

Կեսա.— Ես պտի էրթամ իդա ճամբախ օր կէրթան չդառնան. էրթամ էդ ճամփու էղութեն հ՝իմնամ, հ՝որի՞ կէրթան չդառնան, էն մեկել ճամփախ չխո ամեն մարդ լէ կէրթա, ես Ֆարխիկն իմ, պըտի իդա ճամփու էղութեն հ՝իմնամ։

Քեռուն չլսա, կեսա ու կէրթա. խազալ մի գելի հ՝առեճ, կլա-

ռա, խազալի ետև, կտանի կսրու մի տակ, ըդ կսրին վ... ու գլոխ չկա։ Խազալ հ'ոդի կբռնա, կաչքա օր ըդ կսրին իլին ջանդակ ու գլոխ ա շիքուկ, կաչքա օրթը մե ջանդակ ու գլխու տեխ ա մացե օր թըմմի։ Կբռնա զէդ խազալ ու կդառնա, գիգա քեռու տուն։

Քեռուն կեսա.— Դու ըսիր իդա ճամփխով մէրթա, գացի խազալի ետևեն լարեցի, տարա կսրու մի տակ, հ'մեն ջանդակ ու գլոխ էր շիքուկ։

Քեռին գիլա ու կողփա, խեր կէնա, խերյաթ կիտա աստծուն, թը իմ խորզեն գնաց ու սախ դարձավ էկավ։ Կքնին ու դելին։

Ֆարխիկ էլման կեսա.— Ես պտի էրթամ էն կսրի էղուրթեն հ'իմնամ։

Կէրթա ճամբախ, աստված խրիշտակ գիշու հ'առեճ, չկորցու էնի։ Ֆարխիկ հեռուն կքշա ուր ծին, խրիշտակ խալիվոր կէղի։

Խալիվոր կեսա.— «Հեռուն քշիմ օրթը իմ ծիու քամին չքիսի ինի, պատի գետին ընձի խամար, մեխք ա»։ Խալիվոր դընգի ծիու ետև, կեսա.

— Ֆարխիկ ամանաթ, գյուլին քղիկ։

Կդառնա ետև, կեսա. «Վա՜խ, էդի խրիշտակ էր, չգիցա օրթը բարև իտի»։ Գիլա ու կողփա թը՝ «Ես խրիշտակին բարև չտվի»։ Ծին կքշա, կէրթա ըդ կսրի մեչ, ծին կքաշա թավլեն ու գելի տաս տասներկու հ'օդեք կօլորտի, գելի վերին հ'օդեն, կտեսի օր հանդե մեկ մի յորղան դոշկի մեջ քնուկ ա. որն օր էկեր ա, իդրա անուն չկերցեր ա տվեր ա, հ'ըմնու գլոխ զարկեր ա, շանդակ ու գլոխ շիքեր ա էդ բերթ-կսրեն, մացի մեկ շանդկի ու գլխու տեխ օր թըմմի։

Ֆարխիկ խաղ մի կղանչա էնտեխ.

Կեսա.— Հարե Գուլե
Դու հլին ա
Սպի ճար է
Աչ բըրին իմ
Վյու դու գարե
Բը հավլու կավաթա խոդե
Գուլե բըգիմ չխո ռաշ ժնե։

Կեսա.— Գուլե, հ'ելի նստի, ես տեսեր եմ քու բաժ. աստծու .պառեկով պըտի էնիմ քըզիկ ընձի կնիկ։

Գուլեն խուռնիկ-խրեղեն ախչիկ կէղնի, գելի կնստի, կեսա.

Քու սովրցողի վիզ կոտրի, մացեր մեկ ջանդկի տեխ, մե գլխու տեխ օր թըմմեր։ Գուլեն կեսա.

— Հարե Ֆարխիկո
Աշե բըմեմ ճյուկեկե
Բըֆըռըմ պայե հաֆթ գյուդուկյակյե
Դա թը ջար Գոլե նա գյեր չխոռա Բագյազ։

Կեսա.— Ֆարխիկ, ես պտի էղիմ ճուկ մի, զիս թալիմ յոթ սարի ետև, օր դու թյուջար Գոլեն բերեցիր քըզի խարս։

Ֆարխիկ լէ կեսա.— Հարե Գոլե
Նավե խոդե
Կավու շիրինա
Խոդե դայը ջոդուկ ճավէ ռաջա
Տյու նզանի նեճիրի ճուկան
չքաս խոշ ա։

Կեսա.— Աստծու անուն քաղցր ա, աստված ընձի տվե էրկու խորոտ սև աչք, դու չդինաս ճուկի նեճիր ինչ խդար անուշ ա։

Գոլեն կեսա.— Ֆարխիկ,
Աչե բըբիմ մարագ է
Հավթ գա բակ
Արտ բը քոլըմ
Հառըմ խորակ,
Դա թուջար Գոլե
Նա կյըր չխո ռարուկակ

Ֆարխիկ կեսա.— Գոլե,

Աչե բըբիմ մարգյրակ
Հաֆթ դարակ
Արտ բը. քոլըմ
Բեմայ խորակ,
Գոլե բըքշինիմ հաշկու դիրաքյ։

Գոլեն կեսա.— Պտի էղիմ օձ մի, յոթ տապակ գետին պիտի փորիմ էրթամ ցածր, դու Գոլեն թյուջարի չէնեցիր քըզի խարս մի։

Ֆարխիկ կեսա.— Գոլե, ես պըտի էղիմ օձի մի սանտը յոթ տապակ գետին փորիմ հ'իգամ ցածը, քըզիկ քամիմ ու քաշիմ գետնի մեչեն, կէնիմ ընձիկ խարս։

Իդհախս Ֆարխիկ կհաղթա զԳոլեն, Գոլեն կեսա.

— Ֆարխիկ, դու ընձիկ, ես քըզիկ։

Գելին էդ կսրու մեչ կպառկին իրար ծոց, գելին քուր ու ախպեր։ Կմնա էրկու օր։ Ֆարխիկ կէրթա էդա սար նեճիր։ Ծին կքամափնչի, կառնի զէդի, գելնի ամավեր սարի մի գլոխ։ Աչք կքիսի ուր պապու գեղ։ Սըթին դընգի ուր միտ։ Կնստի գիլա, գիլա հար իրկուն, աչքեր կուռի։ Գելի կխեծի ուր ծին, նեճիր չբռնի, գիգա կսրեն՝ Գոլե մոտ։

Գոլեն կելնի ինոր ծին կքաշա ներս, կաչքա օր Ֆարխկա աչքեր ուռեր ա, էղի քոքոշ։

Գոլեն կեսա Ֆարխկուն.— Ըսա, որն ա էկի քի ռաստ, օր դու լացեր ես, քու աչքեր ուռեր ա, ընձի ըսա, էրթամ ճոչ բերթ ընդրա անկաճ թորկիմ։

Էն լէ կեսա.— Չէ՛, մարդ ընձի չէկի ռաստ, իմ պապու ծին հ'իսնե գլոխ առավ, զիս խանեց էդ վեր ի սարի գլոխ, իմ աչք քիսավ իմ պապու քաղաք, Սըթին էր ինգավ իմ միտ, ես լացի։

Գոլեն կեսա.— Քըզի մա՞մ լէ կա։

Կեսա.— Խա։

Կեսա,— Քըզի նշանլո՞ւ կա։

Կեսա,— Խա։

Հ'իրիկուն օր կէղի, կնստի կպատմա, կեսա.

— Ես ու Սըթին մեկ խնձորեն ինք։ — Ու էդմլա ուր գլխու գացած հ'մեն կեսա, խեքաթ գըկմաց ըդրան կեսա։

Գոլեն լէ կեսա.— Ֆարխիկ, ի՞նչ կիտաս ընձիկ օր ես բարև ճամփիմ Սըթուն։

Էն լէ կեսա.— Հա՜, իդա սարի գլոխ վո՞ն ընձնե բարև կտանա Սըթուն։

Գոլեն լէ կեսա.— Դու ընձի ըսե, ես գրիմ։ Ես ըռհաթ քու բարեվ կճամխիմ։

Ֆարխկն կեսա, ճրաք կբռնա, ու Գոլեն կգրա։

Կեսա. «Շատ կարոտով բարև Սըթուն, ես Ֆիլան ամբրվենի սարի գլոխ մեչ կսրին իմ, ես ու Գոլեն, ինդրա կսրեն ջանդակ ու գլոխ ա, իդհախս շատ կարոտով բարև Զիններին, Նազեին, ու շատ կարոտով բարև իմ խրոխպոր, շատ կարոտով բարև իմ մամուն»։

Գիրը կպրծին, գելին կքնին ուրանց։

Աղոթրան կճողճղա, Գոլեն գելի կկանի կսրի տանիք ու կճչա. երկինք գետինք կդնգա ու գիգա սև խավք, գիգա կբռնա ընտեխ ինչ օր սև կոն (վրան)։

Գոլեն կմտնա ներս, կեսա.— Ֆարխիկ, Ֆարխիկ, էլի դուրս, ասքար բռնց, մըզի կմորթա։

Ֆարխիկ դելի դուրս, կաչքա օր թը դաշտ ու թուրան ինչ օր սև ասքար էղի, կվախենա, կդեղնա։

Գոլեն կեսա.— Հո՜ւ, հորի՜ վախեցար, մի վախնար, իմ խավքերն ին,— կեսա։ — Դե արեք, խավքեր, ո՞րն եք գիգաք Ֆարխկա թուխթ կտանեք Սրթուն։

Խավքեր կեսին.— Չէ՛, մենք չկրնանք տանենք։

Սինամախավք կեսա.— Ես կտանիմ, համա էրկու նայար (դուշման) ունիմ, գիգան ընձի կծրվրոնին իրարուց։

Ֆարխիկ լէ կեսա.— Օր գացիր, ընդոնք օր էկան քըզի ռաստ, ըսա. «Ֆարխկա թուխթն ի կտանիմ Սրթուն»։

Սինամախավք կառի զթուխթն, կթռի ու կէրթա։ Կէրթա ուր դյուշմնին ռաստ գիգա, էրկու դյուշման էկան օր թը զէղի խումլոմ վէրցուն։ Իդախս Սինամախավք թևեր կվերցու, նամակ կիտա իդրանց շանց։

Մեկ խավք մեկել խավքուն կեսա.— Ա՜խ, Ֆարխկա թուխթն ա, կտանա Սրթուն, աստված սիրես, խեղճ ա, թ'էրթա։

Սինամախավք կառի կէրթա, կէրթա Սրթու պապու բակի մեջ գիչի, կաչքա օր թը Սրթին նստուկ ի օղի։ Զինեն ու Նազեն ու Սրթին բակին մեջն ին։ Սրթու դլխուն լէ սև ա քաշուկ Ֆարխկա հ'ապով։

Սինամախավք զինք կդնա բակի մեջ։ Զինեն ու Նազեն կխասին օր թը զէղի բռնին, ծեռ կը թալա խավքու փող օր բռնին կեսին՝ «Ցամա՜ն, էղի Ֆարխկա թուղթն ա բերի». ինոնց սիրտն կվկա։

Խավք կէրթա կնստի Սրթու դլխուն, թևեր կը փանձրցու, թուխթ կպատի Սրթու գիրկ ու, կթռի կէրթա կսրի մոտ։

Սրթին ա զէդ թուխթ կկարթա, կաչքա օր Ֆարխկա թուխթն ա, բարև ա գրի, գելի կուրբխնա, կառի ու կէրթա պապու մոտ։

Պապ կեսա.— Թը Ֆարխիկ օդա էղեր, ես քըզիկ իտենք ընդրան, քու մեխք, ընդրան, չգեր իմ վիզ։

Կեսա.— Ապո՜, օր հըմալ ըսիր, ընձի իզին տուր էրթամ առիմ Ֆարխիկ հ'իգամ։ Տուր ընձիկ քսան խատ էշ, քսան խատ լէ ախչիկ, մարգանակ շոր հագունք, մենք էրթանք բերինք։

Կբերին քսան խատ էշ, քսան խատ լէ ախչիկ, մարդանակ շոր կխագուն, կէնին քարվան, կէրթան։ Ընդրանք կքշին ու կէրթան ճամբախ։ Շատ կէրթան, քիչ կէրթան, աստված դինա, կէրթան Գոլե կսրու տակ կդբին։

Սրթին էդ ախչկներուն կեսա.— Էսօր գող մի գա մեր մեշ, չսպանիք, բռնիք տաք իմ ծեռ։

Ֆարխիկ լէ Գոլեն կեսա.— Ես կէրթամ քարվնի գողութեն։

Գոլեն կեսա.— Խեղճ ին, ի՞նչ կէնիս մաղե ջուլ ու չվան։

Ֆարխիկ դինա թը Սրթու քարվան ա, կեսա.

— Չէ՛, ես պըտի էրթամ։

Գելի կէրթա մեշ քարվանին գողութեն, չփախի, կկանի, ախչիկներ կբռնին կիտան ըն Սրթու ծեռ։ Մում մի Սրթին կկպուն, մեկ լէ Ֆարխիկ կկպու, իրարու ծեռ կբռնին, իրարու սուրիաթ կաչքին։

Ֆարխիկ Սրթուն կեսա.— Սրթի, դու իմ Սրթին ի՞ս, հըլե չգինամ թը դու ախչիկ ի՞ս, չէ դու կնիկ իս։

Սրթին լէ կեսա.— Ֆարխիկ, բախտ չմացե, ես անաղատ իմ, ինչխ օր ես իմ մոր թուրջա էղիմ։

Ֆարխիկ կթողի գՍրթին օդի ու գելի քոշկ, կէրթա դընգի վըր քիթ ու մոթին ու կքնի, կքուփոթի (կմտածե)։

Կքնի, կմնա քնուկ, սաբախտան դիմնա, գելի կաչքի օրթը Սրթին հ՚ոցքի գացեր ա։

Սրթին կեսա ախչկներուն.— Ելեք էրթանք, բախտ չմացեր, Ֆարխիկ բեբախտ ա։

Սրթին ա՝ կէրթա գեղ, կքուփոթի, կմարախոտի ու կմեռնի, կեսա.— Ֆարխիկ բեբախտ էղեր ա, ես կմեռնիմ,— կեսա ու կմեռնի, կտանին ու կխորին։

Իդհախս դառնանք Ֆարխկա վրեն։

Ֆարխիկ սաբախտան գելի կաչքա օրթը Սրթին բարձե, գացեր ա։

Ֆարխիկ գելի հ՚ոցքի իգին կառնի Գոլեից, կեսա.

— Ես ու դուն հարի էսօր, ինչ օր ախպեր ու քուր ինք էղեր, թը ես խասա իմ մուրազին, դու իմ ճոչ կին, էն իմ պզտիկ կին, թե չխասա իմ մուրազին, գետնի մեռել լէ քըզի կառնի։

Գոլեն իդրան իզին կիտա, էդիկ գիգա։ Գիգա, շատ ու քիչ աստված գիտնա, գիգա ուր պապու քաղաք, կաչքա օր թը ճժեր վըր ճամբուն ճան կխաղան։

Կեսա.— Ճժեր, տվեք ճանմ լէ ես թալիմ։

Ինդոք լէ կեսին.— Չէ, գնա Սրթու պապու տուն, ճան էնտեխ շատ կան, Սրթին գացեր ա Ֆարխկա մոտ բերախտ էղեր ա Ֆարխիկ, Սրթին էկավ հ'ոդա, մուռախ էրավ ու մեռավ, ընդրա պապ խեր ու խերյաթ էրեց, դնա էնտեխ ճան շատ կա, բի քըզիկ։

Ֆարխիկ կեսա.— Տղա՜, Սրթին մեռեր ա՞։

Կեսա.— Խա՛։

Կեսա.— Ես Ֆարխիկն իմ, առ օսկի մի քե, էրթանք ըդրա գերեզման տուր ընձի շանց։

Կելին կէրթան, գերեզման կիտա շանց։ Ֆարխիկ խազմ օր կկանչա, Սրթին գելի կնստի։ Կուրբխնան վըր իրարու, կփաթթին ու կնստին։

Ջուաբ կտանին Սրթու պապուն, կեսին. «Ֆարխիկ էկե նստե Սրթու գերեզմնին, խաղ էսե, Սրթին ելե նստե»։

Պապ կեսա.— Փըշըմ չէրթամ, թըխ զիրար տեսին, ընդրանց մեխք ընգավ իմ վիզ։

Սիրտ թըմուլ չիտա, գելի ու կէրթա կտեսնի։ Պապու աչք օր կքիսի Ֆարխկան ու Սրթին, էրկուս լէ կմեռնին ու կխորին մեկ տապան։

Ջախկեն չթորկեց օր ընդրանք խասնին ուրանց մուրազին։

Էդմլա ինոնք չխասան ուրանց մուրազին, հալա դու խասնիս քու մուրազին։